

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Մատթեոս Մամուրյանը (1830-1901) արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի այն կարկառուն ներկայացուցիչներից է, որն իր նպաստը է բերել նաև մեր գրականությանը: Մասնավորապես, մեզ հետաքրքրող խնդրի առումով, խիստ ուշագրավ է նրա «Հայկական նամականին», ուր Կոնստանդնուպոլսի մի շարք գրական դիմանկարներ, որոնք ժանրի առաջին արտահայտություններից են եթե ոչ ամբողջ հայ գրականության մեջ, ապա գոնե նրա արևմտահայ հատվածում:

1

Իր «նամակները» նա սկսել է գրել Պոլսում, ուր 1861-ից պաշտոնավարում էր Հայոց պարոնիարքարանում և հրապարակել է մայրաքաղաքի ու Զմյուռնիայի այլուայլ պարբերականներում Վոլուտ սպորադիկությամբ: Հայրենի քաղաք վերադառնալուց հետո էլ այս անգամ իր հիմնադրած «Արևելյան մամուլ» հանդեսում (1871) տպագրել է ևս երեք նամակ (ԽԹ, Ծ և ԾԱ), ապա՝ առանձին գրքով նույն կեղծանվամբ լույս ընծայել առանձին գրքով հավելելով 19 անդիպներ: Այսպիսով, «Հայկական նամականին» բովանդակում է 70 նամակ:

Հարկ է նշել, որ հեղինակը գրքի առանձին հրապարակության առթիվ գրած առաջաբանում հանիրավի խիստ է արտահայտվել իր աշխատության մասին: Նա հավատացնում է, որ մամուլում ցիրուցան իր «մոտաժ թղթերը» հափորի մեջ է ամփոփել անսալով բարեկամների խորհրդին, որ դրանք «ինչնին գրական կամ պարսկական արժեք մը չունին, կկտրուր և իրենց ծնունդ առած ժամանակին հարմար բաներ են», ու եթե ինքը, այնուամենայնիվ, հոժարել է հրապարակել, ապա այն մտահոգությամբ միայն, որ «ազգին վիճակին վրա» արտահայտած իր երբեմնի «ցավերն ու մտածությունները» այսօր էլ առկա են:

Շարժվելի իրավացի էին Ս. Մամուրյանի ժամանակակիցներն ու հետնորդները, որոնք խոստովանում էին «Հայկական նամականի»

անուրանալի արժանիքները և կարևորում նրա նշանակությունը: Հիշեցնենք մի քանի գնահատական միայն.

Առօրինակ Առօրինակ. «Այդ հատորը իբր իր ժամանակին լավագույն գործերն մեկը մնացած է և պիտի շարունակե մնալ»².

Հրանտ Ասատուր. «Հայկական նամականին հրաշակերտն է Մամուրյանին, և հայ գրականության ալ հրաշակերտը»³.

Հրաչա Աճառյան. «Հայկական նամականին» կմնա միշտ իբրև հայերեն լավագույն գործերից մեկը, իբրև հայ կյանքի փիլիսոփայական պատմությունը»⁴:


Ինչ վերաբերում է «Հայկական նամականի» ժանրային բնութագրմանը, ապա այդ հարցում կարծիքները տարաբևեռ են: Ա. Արփիարյանն այն համարել է քրոնիկներ, Աշոտ Հովհաննիսյանը պամֆլետներ ու ֆելիեպոններ⁵, Հր. Աճառյանը դասել է հեղինակի «գուր գրական գործերի» շարքը... Իրապես «Նամականին» հրապարակագրական երկ է, որը, սակայն, մատուցված է գեղարվեստական հանդերձավորմամբ: Նամակը Մամուրյանի նախասիրած տեսակն է (հիշենք նրա «Անգղիական նամականին կամ Հայու մը ճակատագիրը» (1881) ստեղծագործությունը), որը հնարավորություն էր ընձեռում, իր բառերով ասած, հուզել «ամեն խնդիր»: «Հայկական նամականի» սկզբում նա տալիս է նամակի այսպիսի մի բնորոշում. «Նամակագրությունը խոսակցության մոտ բան մ' է, որու մեջ ամեն խնդիր կ' հուզի առանց խորունկը մտնելու» (13), բայց հենց ինքն էլ միտումնավոր խախտում է այդ «կանոնը». ոչ միայն միջամուխ է լինում զանազան խնդիրներում, այլև խորհրդածում է, բանավիճում, հեզում, նկարագրում ինչ-ինչ տեսարաններ, դիմում քաղաքական ենթատեքստ ունեցող երազի գեղարվեստական հնարքին, խոսքը պաճուճում հեղուրական դարձվածքներով և այլն: Ահա ինչու նրա նամակները դուրս են գալիս անձուկ տեղեկավորության, սովորական թղթակցության ու հոդվածի շրջանակներից, այսպես ասած՝ գեղարվեստականում են դառնալով ակնարկ, ֆելիեպոն, պամֆլետ, պարկեր, տրամախոսություն և այլն:

Գեղարվեստականության առումով ամենից ուշագրավը, անշուշտ, վերջին նախապես չհրապարակված այն նամակներն են, որոնց մասին խոսք եղավ վերը: Սրանցում հեղինակը, ուրվագծելով մի սյուժե՝ կապված Զմյուռնիայից գաղղոնի Պոլիս եկած Աշխենին որոնելու հետ, նկարագրում է պարահանդես և կեղծանուններով ներկայացնում բազմաթիվ անձանց, որոնք

արևմտահայ իրականության հայտնի դեմքերն էին: Թեև հեղինակը տպագրության արժանի է համարել այդ ուր նամակները (202)⁶, բայց որևէ մեկնաբանություն չի տվել, մինչդեռ հենց այդ հատվածներն են, որ ինչ-ինչ բացատրությունների և վերծանումների կարիք ունեն:

Մեր նպատակից դուրս է «Հայկական նամականի» համակողմանի քննությունը, մանավանդ որ այդպիսի փորձեր արդեն արվել են⁷: Ուստի ուզում ենք սահմանափակվել մեր նյութին առնչվող մի քանի արծարծումներով:

Ամենից առաջ, ինչու՞ է Մ. Մամուրյանը ժամանակի գործիչներին հանդես բերել կեղծանուններով: Հայկ Ղազարյանի դատողություններից հետևում է, որ այդպես է վարվել՝ զգուշանալով «սուլթանական գրաքննչական ռեակցիայից»: Նա գրում է. «Մամուրյանը հայտնում է, որ «Հայկական նամականի» գրված էր չափազանց «գուցեցուց»: Հեղինակը ամեն կերպ կաշկանդել է իր գրիչը, անձերի ու եղելությունների մասին խոսել է այլաբանորեն, առանց իսկական անունները տալու...»: Եվ ապա՝ «...Գաղթանունների կամ ծածկանունների տակ էր գծագրում ազգային «երևելիների» դիմանկարները, դրվագում դժուրապես հրապարակախոսներին, անարգանքի սյունին գամում պահպանողական գործիչներին»⁸: Գրաքննչական գործոնն, անշուշտ, կարևոր է. «Հայկական նամականիում» այն առկա է, և ուսումնասիրողի նկատմամբ սկզբունքորեն ընդունելի է: Բայց ահա դիմանկարների վերաբերյալ նրա կարծիքը տարակուսելի է: Ինչու՞ Մամուրյանը առանձին նամակներ (Ը, Ժ) է նվիրել Սկրտիչ Տիգրանյանին (ընդ որում ամենախիստ գնահատականները տալով նրան՝ «արդարև հրեշ մը» և այլն) ու Նահապետ Ռուսինյանին, բայց պարահանդեսում նրանց դիմակավորել է: Ինչու՞ հականեհանվանե հիշատակելով Սրեփան Ոսկանյանին, Հովհաննես Տերոյենյան (Չամուռձի) , Սերվիչենին, Սկրտիչ Խրիմյանին (տես Զ, ԺԵ, ԺԶ նամակները)՝ պարահանդեսային տեսարաններում նրանց, այնուամենայնիվ, քողարկել է: Վերջապես, ինչու՞ բացատրել հեղինակի համակրանքը բացահայտորեն վայելող այնպիսի դեմքեր, ինչպես Սկրտիչ Պեշկոպաշյանը, Հարություն Սըվաճյանը կամ Գրիգոր Օփյանը, նույնպես ծաղկած են հանդես գալիս: Հասկանալի չէ՞ միթե, որ այս պարագայում «սուլթանական գրաքննչական ռեակցիան» որևէ էական դեր չի կատարել: Պարզապես Մամուրյանը հավատարիմ է մնացել իր ընտրած գեղարվեստական հնարքին, պահպանել



պայմանական սյուժեով, որ ներառում է այլուառյ վիպական դրվագներ (Պարոույրի ականա ունկնդրումը Նուրհանի և Արզամի գաղտնի խոսակցությանը, Շամիլի և Իզարի կազմակերպած սիրախաղը Նուշպանի հետ, մարտահրավերի առաջարկը և այլն), թելադրված մյուս պայմանականությունները, եթե պարահանդեսը, ինչպես երկիցս ակնարկված է Կ և Հ նամակներում, տեղի է ունեցել Բարեկենդանի գիշերը, ապա ուրախության ու խրախճանքի այդ օրերին դիմակներ կրելն առավել քան պարեհ էր: Ծածկանուններ օգտագործելու գեղարվեստական հնարքին, ինչպես իրավասփորեն մատնանշել է Ա. Հովհաննիսյանը, Մամուրյանը դիմել է Միքայել Նալբանդյանի «ներգործությամբ»⁹ (Գիրսաս-Սարգիս Ջալալյանի, Ալազ-Գաբրիել Ալազովսկու հիշատակումները դրա համոզիչ ապացույցներն են):

Անշուշտ, Ա. Մամուրյանը համոզված էր, որ «Հայկական նամականիի» ընթերցողները կլռահեն, թե ովքեր են թաքնված այս ու այն կեղծանվան տակ: Հ.Ասատուրը հաստատում է, որ «ծածկող դիմակը այնչափ թափանցիկ է որ ոյուրավ կը ճանչցվին»¹⁰: Իսկ ահա ինչ է գրում Ա. Հովհաննիսյանը. «Թերթելով Վրույրի էջերը՝ դժվար չէ, հիրավի, նշմարել Նար-Պեյի, Չամուռճյանի, Ֆերուհանի, Սերվիչենի, Գր.Օրյանի, Շիշմանյանի, Պեշիկթաշյանի, Սըվաճյանի, Ոսկանյանի դիմաստվերները...» (հեղագրորդը չի մատնանշել Շիշմանյան-Չերենցյին տված կեղծանունը)¹¹: Չնայած այս հավաստումներին՝ կեղծանունների ինքնությունը պարզելու խնդիրն ամենևին էլ հեշտ չէ և, ասենք միանգամից, ամբողջությամբ լուծված չէ: Հեղինակը առաջադիր խնդիր է համարել ճանաչել տալ «ներքին մարդը» (227): Այդ իսկ պատճառով էլ, որպես կանոն, նրա հաղորդած կենսագրական տեղեկությունները հարևանցի են, փոխարենը ուշադրությունը բևեռված է գործիչների արտաքինի նկարագրություններին, գործունեության բնութագրմանը: Ավելացնենք նաեւ, որ ոչ միայն ինքը՝ Մամուրյանն է հանդես գալիս կրկնակի ծածկանունով (Վրույր և Պարոույր), այլև նրա պատկերած անձնավորություններից մի քանիսը (Առուսի հանուտնան և Եղում, Ջուզել և Հատուն, Ֆելահ և Թոթոսիկ) նս:

Որոշ կերպարներ (Իզար, Պիմակալոր կին, Տոմինո հագած մեկո) թերևս ունեցել են նախադիպեր, բայց վերջին հաշվով սրանք ստեղծական են, քանի որ չեն մարմնավորում ճանաչված մարդկանց:

Բոլորովին այլ կարգի «հերոսներ» են Շամիլը, Արբունը, Սրենսորը, Մեղերնիկը, Զնգելը, Սուսայիկը, Թաշմանը, Նուրիանը, Արգամը, Սալարը, Թոթվիկը, Յանսինուրը, Նուշպան, Լուրանյանը, Եղումը, Հուրիկը, Սահելը, Նադանը, Ապշենը, Փառնուկը և Եսուկը, որոնք արևմտահայ հանրային, քաղաքական, մշակութային, կրոնական միջավայրի ծաղկալուսնային անհատներն են:

Առաջին բանասերը, որ «գաղանազերծել» է թվարկված գործիչներից մի քանիսին, Հ. Ասատուրն է: Նա նշել է Սերվիշենին (Աղբուկ), Սկրպիչ Պեշկոթաշլյանին (Թաշման), Գրիգոր Օդյանին (Նուրիան), Բարունակ քեյ Ֆերուհխանին (Աղգամ), Հարություն Սըվաճյանին (Եղում), Աբեթնիկ Ներուզին (Թոթվիկ), Արեփան Ոսկանյանին (Լուրանյան) և Նահապետ Ռուսինյանին (Յանսինուր): Մեր ժամանակներում Ա. Հովհաննիսյանը բացահայտեց Տերոյենց-Չամուռճյանին (Սրենսոր), իսկ Հր. Աճառյանը՝ Նար-Պեյին (Նուշպան): Սկզբնապես Հ. Ղազարյանը պնդել է. «Աշխատության մեջ թուլիկ կերպով երևում են Սալարի, Շամիլի, Սահել և Նադան վառոդաբերդի, Ապշենի, Փառնուկի և այլ ծածկանուններով հանդես եկող գործիչների դիմանկարները, որոնց փակ, ժամանակակիցների ասելով, թաքնված են Ն.Զորայանը, Հ.Շիշմանյանը, վանեցի Պողոս վարդապետը, Կ.Յուրուճյանը և այլ գործիչներ»¹²: Սակայն արդեն «Հայկական նամականիի» ծանոթագրություններում Սահել կեղծանունը վերագրված է Սկրպիչ Տիգրանյանին, Նադանը՝ Սկրպիչ Խրիմյանին, Ապշենը՝ Կարապետ Շահնագարյանին, Աղբունի հակոտնալինը՝ Հարություն Սըվաճյանին, իսկ մյուսները համարված են անհայտ¹³:

Կեղծանունների վերծանումը սոսկ բանասիրական հետաքրքրություն չի ներկայացնում. այն կարող է շահեկան լինել սրբեղծագործության գաղափարական միտումները հասկանալու համար, սակայն կարծում ենք, որ այդ խնդիրը պետք է աշխատել լուծել ոչ թե ենթադրությունների, այլ փաստարկումների միջոցով: Վերստին հիշեցնելով, որ մեր նպատակից դուրս է «Հայկական նամականիի» հանգամանալի հետազոտությունը, այնուամենայնիվ ստորև կփորձենք բանասիրական քննությամբ պարզել անհայտ համարված կերպարներից երկուսի ինքնությունը:

Նախ՝ Շամիլի մասին:

Անտարակույս, նա դիմակավոր կերպարներից գլխավոր «դերակատարն» է: Շամիլը այն միակ անձնավորությունն է, որ ին

նամակից մուտք գործելով «հանդիսասրահ» այնուհետև ներկա է մնացյալ բոլորում. կամովին հանձն առնելով լինել Վրույրի Կիկերոնը՝ իր «բարձրաձայն դատողություններն» է անում, ծանոթացնում նրան մյուս «հերոսներին»: Ըստ էության Շամիլի (մասամբ նաև Եղուվի, որ եզրափակիչ չորս նամակներում ներկայացնում է մի քանի դիմակավորների) միջնորդությամբ է, որ հեղինակը ընթերցողին է փոխանցում իր գնահատականներն ու կարծիքները: Ինչ վերաբերում է Շամիլին, ապա նրա բնութագրությունը տալիս է Նուրիան-Օդյանը (նամակ ԿԱ):

Շամիլի մասին հայտնված տեղեկությունները թեև սուղ են, բայց բավականաչափ խոսում: Դրանց քննությունը բերում է այն հետևության, որ այս անվան հասցեատերը Հոլսեի Շիշմանյան-Օբերենցն է: Փորձենք համոզվել դրանում վկայակոչելով առավել բնորոշ եղելությունները:

Ա. Արդեն նշեցինք, որ Շամիլին ներկայացնողը Գրիգոր Օդյանն է: Կարծում ենք, որ սա պատահաբար չի արված, քանի որ լավ հայտնի է, որ Օդյանը և Օբերենցը ոչ միայն մտերիմներ էին, այլև գաղափարակից-համախոհներ: «... ես ինքս առաջինն գնհատեցի անոր (Շամիլի.-Ալ.Ս.) արժեքն ու անոր իմ անսուր բարեկամությունս նվիրեցի» (240), - ասում է Նուրիանը: Բանասերներից մեկը ևս նկատել է այս իրողությունն ու արձանագրել. «Շուտով Գրիգոր Օդյանի հովանիին մտած՝ (Օբերենցը .-Ալ.Ս.) անընդհատ բանակռվող հողվածներ կը հրապարակեր...»¹⁴: Իսկ երվանդ Օդյանը, որ շար լավ գիտեր հորեղբոր անձն ու գործը, հավաստել է. «Օդյանի ամենն մտերիմ և սիրելի բարեկամներն մին եղած էր միշտ Շիշմանյան: Գրեթե Բարիզեն վերադառնալեն անմիջապես եղբը ձանչյած են գիրար... և ամեն ատեն սերտ մտերմությունն անվթար պահված է իրենց մեջ»¹⁵:

Բ. Մի առիթով (նամակ Կ) Ֆելաիդ Շամիլին համարում է Վրույրի մենտորը («Դեռ շար բաներ պիտի իմանաս, եթե այդ մենտորիդ անասա»): Այս պիտակումը, թեև ասված է հեզմանքով, բայց իրապես արտացոլում է ճշմարտությունը: Ինչպես հայտնի է, Մենտորը հոմերոսյան դյուցազներգության մեջ Ոդիսսեի որդի Տելեմաքի դաստիարակն ու խրատարուն էր և, իբրև այդպիսին, դարձել է խորհրդանշական: Եթե Շամիլը «Հայկական նամականիի» էջերում Վրույրի մենտորն էր փոխաբերական իմաստով, ապա Օբերենցը Մամուրյանի համար այդպիսին է եղել ուղղակիորեն, ինչը վերջինս խոստովանել է հրապարակավ: Նա

«Անգղիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը» երկի առանձին հրապարակությունը նվիրել է իր «վաղեմի դաստիարակ» Ծերենցյին, որն «առաջին անգամ ազատ մտածման ճաշակն» «ներշնչած» էր իրեն: Հիշեցնենք, որ Փարիզի Սուրբադյան վարժարանում ուսանելիս (1845-1850) Մամուրյանը աշակերտել է Շիշմանյանին, որ որպես մանկավարժ պաշտոնավարել է հիշյալ հաստատությունում:

9. Խոսելով Շամիլի «անագորույն բախտի» մասին՝ Նուրիանը մատնանշում է այսպիսի մանրամասներ. «Մայրն անոր անուշ սիրտ, հայրը լոկ անուն մը տվին, և ընտանեկան աղետներ՝ վրան կանխահաս պարտավորություններ բերին» (239): Թե ում նկատի ունի Օրյանը, մեկն պարզ կդառնա, եթե ընթերցենք Ծերենցի ինքնակենսագրական տոգերը. «Որք մորմե 3 տարեկան, հորմե 11 տարեկան, անցուցեր եմ տղայությունս և պատանեկությունս տարուբեր, տարտամ, չունենալով որևիցե ապահովություն վաղվան ապրուստին համար»¹⁶:

7. Հիշենք Ծերենցի կենսագրության ծանոթ իրողությունները (ուսումնառություն Փարիզի Սորբոնի և Իտալիայի Պիզայի համալսարաններում, 1848-ի ֆրանսիական հեղափոխությանը հաջորդող իրադարձությունների ականատես ու արձագանքող, հանրային ու հրապարակախոսական բուռն գործունեություն, կրքոտ բանավեճեր...), համադրենք այս փաստերը Նուրիանի ակնարկումներին («Բարի՛զ սրապած գեղեցիկ գաղափարներն», «Բոլոր եվրոպա ի պտույտ հաներ էր», «հստակ, եփուն, հեզնալի, ազդեցիկ և ազատական գրիչ մը») և կհամոզվենք, որ Շամիլը և Շիշմանյանը նույն անձն են:

Գալով այն հարցին, թե ինչու է Շիշմանյանին հեղինակը տվել Շամիլ կեղծանունը, ապա, ինչպես նկատում է Նուրիանը, «Մեր այս Շամիլն չնմանիր մյուս Շամիլին, որ Կովկասու լեռներու վրա շահենի պես կ'սուրար...» (238): «Վրացի (իմա լեռնական.-Ա.Լ.Մ.) Շամիլի» և «սուրանուն հայ Շամիլին» միավորողը նրանց արտաքին նմանությունն էր, որ հաստատում է նաև Վրույրը. «Վրացի մը գոր արդեն տեսեր և Շամիլի նմանցույցեր էի»¹⁷ (195):

«Հայկական նամականիի» կենտրոնական տիպարներից մեկը Սալարն է, որին ամբողջովին հադկացված է ԾԹ նամակը և մասնակիորեն՝ դրան նախորդողն ու հաջորդողը, և որի նախադիպը անծանոթ է (Հր.Ասատուրը թվարկել է առանց պարզաբանելու, թե ով է):

Մեր համոզմամբ այս անվան տակ Սամուրյանը թաքցրել է Ստեփան Ասլանյանին, որի կերպարը քաջածանոթ է Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերից»: Փաստենք այս պնդումը:

Նախ՝ այս կերպարը պատկերված է համադրման եղանակով. Շամիլը նրան և Արզամիս գրեթե մշտապես բաղդատում է միմյանց հետ՝ տալով նրանց համեմատական բնութագիրը: Եվ առաջին հերթին հենց այդ զուգակշռումն էլ օգնում է ստանալու որոնվող հարցի պատասխանը: Խոսելով Արզամիս և Սալարի մասին՝ Շամիլը նկատում է. «Երկուքն ալ զինվոր են, երկուքն ալ մի և նույն ուսումնարանը վարժ և ուսում առեր են...» (231): Հ.Ասատուրի վկայությամբ՝ Արզամը քաղաքական ժողովի, ապա Ազգային ժողովի արենապետ Բարունակ բեյ Ֆերուհխան-Քրթիկյանն է (1824-1868), որը եղել է զինվորական բժիշկ, ուսանել Կալաթա Սերայի զինվորական ուսումնարանում: Ստեփան Ասլանյանը նույնպես զինվորական բժիշկ էր, և, ինչպես Հ.Պարոնյանն է գրում, «աշակերտ արքունի բժշկական (Կալաթա Սերայի. - Ալ. Մ.) դպրոցի»¹⁸:

Ապա «1863ին՝ նոր ասպարեզ մը բացվեցավ իր առջև, Սալար... զգալի ծառայություններ մատուցյալ սահմանադրական նոր իշխանության: Անհնարին գործունեությամբ կազմեց, հաստատեց սուղ ժամանակի մեջ թաղական և երեսփոխանական խորհուրդներն ու ժողովները...» (233): Այս իրողությունների հետևում դարձյալ կանգնած է Սալարը: Արշակ Ալադյանյանը հաստատում է, որ Ասլանյանը 1863-ի մարտի 23-ին նշանակվել է «Սահմանադրության գործադիր արենապետ», և ավելացնում է. «Այս հանձնաժողովը հաջողեցավ կատարել տալ իր հսկողության տակ բոլոր թաղական խորհուրդներու և երեսփոխանական ընտրություններ, որոնք տեսչին 1863 Ապրիլեն Սեպտեմբեր»¹⁹:

Երրորդ՝ Սալարը՝ «մամուլի բերանը կարկելու (լռեցնելու.-Ալ.Մ) կ'ելներ՝ տպագրական կանոններ հաստատելու առաջարկելով» (234): Սա ևս առնչվում է Սր.Ասլանյանին: Նա անդամակցել է տպագրական օրենքներ սահմանելու նպատակով 1861-ին քաղաքական ժողովի կազմած այն հանձնաժողովին, որը պատրաստել է մամուլի վերաբերյալ դրականորեն օրենքներ²⁰:

Վերջապես՝ Շամիլի բնութագրումներից իմացվում է, որ Սալարը, մտնելով սահմանադրական ասպարեզ և ծավալելով բուն գործունեություն, այնուամենայնիվ «ցույց տվավ որ անգործ է ազգային հառաջադիմության մեծ

գործին գլուխ կանգնիլ և առաջնորդել, ուստի և ընկալ...» (233): Այս ակնարկումները նորից վերաբերում են Սր.Ասլանյանին. նա 1863-ի սեպտեմբերին ընտրված Քաղաքական ժողովի ատենապետն էր, սակայն երբ երկու տարի չանցած վերակազմվեց հիշյալ ժողովը, դուրս թողնվեց, և նոր ատենապետ ընտրվեց Բարունակ բեյը²¹:

Կարելի է ասվածը ամրապնդել՝ նաև զուգահեռներ անցկացնելով պարոնյանական դիմանկարի հետ, բայց դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ վերոբերյալ փաստերն ապացուցում են, որ Սալառո, իրոք, Սրտփան Ասլանյանն է:

Երկու խոսք «Հայկական նամականի» կեղծանունների բնույթի մասին: Դրանց ընտրության սկզբունքը ավանդական է: Մամուլյանը ևս, ինչպես սովորաբար ընդունված է, անձնավորություններին չի տալիս կամայական, պարահական անուններ, այլ ընտրում է այնպիսիք, որոնք համապատասխանում են նրա «բովանդակությանը» կամ հուշում ով լինելը: Առաջին խմբի անուններից են Արբունը (արբունքի հասած իմաստով), Սրտփորը (Տրոյական պատերազմի մասնակից հումերոսյան հերոս, որի ձայնը հավասար է եղել հիսուն հոգու ձայնին, և որի սասկությունից էլ նա վախճանվել է), Մեղերնիկը (ավստրիացի պետական գործիչ և դիվանագետ Մեղերնիխը հայրնի էր հեղափոխությունների ու ազգային-ազատագրական պայքարի հանդեպ տաժած թշնամանքով), Ջնգեկը, Մուսայիկը, Ֆելլահը (ֆելլահ-երկրագործ, մշակ), Թոթիկը (թոթվել բառից), Լուրանյանը (լուրանք բառից), Ապշենը (ապշել բառից) , Հուռիկը, Փառենը, Եսուկը ստեղծված են ընդգծված բառարմատներից:

Սնայյալ կեղծանունները կազմված են այլույլ զուգորդումներով. Յանսինուրը, Եղումը Ռուսինյանի, Մեռուի երևառաջությունն է. Պեշկիթաշյան-Թաշմանին մատնում է ընդգծված տառակապակցությունը. Նուշպան-Նար-Պեյին՝ անվան բաղադրիչների սկզբնադրաձևերը (Ն և Պ). Հովսեփ Շիշմանյանին, Սրտփան Ասլանյանին, Բարունակ բեյին՝ հնչյունական նմանությունները (Շամիլ, Սալար, Աղգամ): Դժվար է ստուգաբանել Նուրհան. Սահել, Նափան կեղծանունները, բայց հազիվ թե դրանք քմածին լինեն:

Գրական դիմանկարը թերևս արձակի այն սակավաթիվ րեսանկերից է, որը չի հանդուրժում, այսպես ասած, հեղինակային չեզոքություն, պարտադրում է անպայման դրսևորել վերաբերմունք «բնորդի» հանդեպ: «Հայկական նամականին» լիովին բավարարում է այս պահանջը: Մ.Սամուրյանը ոչ միայն չի թաքցնում իր համակրանքն ու հակակրանքը, այլև երբեմն հանդես է բերում աչառու մոլեցում, նույնիսկ թույլ է փախս վիրավորիչ որակումներ (Ստեփան Ոսկանյանին Լուստանյան կեղծանունով կոչելը, նրան «այլանդակ հիմար» համարելը ասվածի ապացույցն է): Բարեբախտաբար, նման ծայրահեղությունները Սամուրյան դիմանկարչին բնորոշ չեն: Այդ դիմանկարները սկզբունքորեն անկողմնակալ են և վերաբրադրում են իրական նախադիպերին, ինչի վկայությունը կարող են լինել այն զուգահիշումները, որ առկա են նրա և Միք.Նալբանդյանի, Հ.Սըվաճյանի, ապա նաև Հ.Պարոնյանի գնահատումներում, ինչը, իհարկե, բացատրվում է աշխարհայացքային ընդհանրություններով:

Քիչ բացառությամբ, «Հայկական նամականիում» հերոսների բնութագրմանը նախորդում կամ ուղեկցում են նրանց արտաքինի նկարագրությունները: Կարևոր է նշել, որ դրանք ոչ թե ինչ-որ հարդարանք կամ համեմունք են, այլ էությունը բացահայտելու միջոցներ, որոնք լրացնում կամ ամբողջացնում են դիմագիծը: Ընդ որում, ամեն անգամ դիմելով կերպարի արտաքինին, հեղինակը կարողանում է գտնել այն մասնահատուկը, որ բացահայտում է նրա ներքինը: Սիա Արբուն-Սերովիչները, որի արտաքինը ներհակ է նրա էությանը, այլուց նման «արտաքին շուք, նշան, փայլ» չունի. «Թզուկ մը կ'երևի իր բոլորովիքը կեցող ունկնդիրներու մեջ, այլ հսկա մ' է մրքով: Երկու շարժում, հրապարտ մանր աչքեր իր բնավորության հայելիներն են. թեև արբուն հասակ, ճաղալ գլուխ, ցավագար մարմին ունի, դեռ աշխույժն է պարանեկան, իմացականությունը բերի և ճապուկ, հնարագետ հանդգնությունն աննկուն» (196): Իսկ Ստեփանոր-Տերոյենցը, ընդհակառակը, «չոր ու ցամաք հսկա մ' է», բայց նրա աչքերն անլույս ու անկայծ են: Անսքող ծաղր կա Տերոյենցի արտաքինի նկարագրության մեջ. «... ֆեսը գլխին վրա կ'թռի, սրունքը՝ քայլելու ատենն իրարու կ'խառնվին, քիթը մարմենն առաջ կ'վազի, ձեռները մինչև ծնկները կ'իջնեն և երկու օղահերձ թիերու պես կ'շարժին» (203): Տերոյենցի «մեծ հասակը» ներդաշնակ է նրա համբավին՝ «իբրև բազմահնար պարագլուխ

խավարասեր կուսակցության մը» (203): Ամենին պատահական չէ, որ Նուշպան-Նար-Պեյին ներկայացնելիս Շամիլը (չմոռանանք, որ նա հեղինակի թարգման-ձայնափողն է) շեշտում է մանրամասներ, որոնք ակնարկում են նրա բարոյական նկարագրի մասին:

Գեղարվեստական ինքնագրիկ հնարքով է պարկերված Թաշման-Պեշկեթաշյանի արտաքինը: Այն փոխակերպվում է «գործողության» ընթացքում: Երբ Թաշմանը մտնում է Շամիլի և Վրույրի օթյակը, վերջինիս թվում է, որ «ծերունիի երես ուներ»: Բայց բավական է, որ հանի թուղթ ու մափիտ և սկսի գրել, որպեսզի նրա դեմքը այլափոխվի. «Այն որ 'ի սկզբան փարևոր, նիհար ու գունափ երևցեր էր ինձ՝ քանի գրիչը շարժե՛ր մերթ ընդ մերթ փոթալի ճակատը շփելով, և դեպ 'ի վեր նայելով, նոր գույն, նոր եռանդ և աշխույժ կ'ստանար և կարծես թե կ'առույգանար: Իր խոր այլ իմաստալից աչերը թավ ունքերուն ներքև՝ փայլակներ կ'արձակեին, իր գրեթե փոսուր դեմքը կը պարզեր և կայտառ զվարթություն և փափկություն կ'ստանար. ճակատը՝ որ նսեմ ու փրփում էր, կ'փայլեր կ'լառեր և իբր թե վեհ տեսիլներու հնոց մ' էր. նույն իսկ արծվի քիթն՝ որ իր այտերը կ'ստվերեր՝ կ'նդնար, ռնգունքը կ'սարսռեին և երկայն ծնոքն ու թուշն՝ որ ցանցառ մորուսովը ծածկվեր էին՝ գեղափայլ երևոյթ մը կ'առնվին» (213): Մամուրյանի նախընտրած կերպավորման միջոցներից են զուգահեռումները: Հիանալի՜ ծանոթ լինելով հին ու նոր պարմությանը և գրականությանը՝ նա այս ու այն գործչի մասին դարողություններ անելիս գտնում է նրա եվրոպական «նմանակը»: Երբեմն այդ գնահատականները հակիրճ-բանաձևումներ են, ինչպես «Թուրքիո հայոց Պերանժեն է» (214) (Պեշկեթաշյան-Թաշման), «Հայոց Ղեմոկրիտ ես» (260) (Եղում-Սըվաճյան), ավելի հաճախ՝ ծավալուն խորհրդածություններ. «... եթե Իսլախ գտնվե՛ր՝ Մաքիավել մը կ'լիներ, Անկլիա՝ Բիդ մը, Ֆրանսա՝ Թալեյրան մը, իսկ Թուրքիո մեջ պարզապես ազատաբան Եգոթոս մ' է» (196-197) (Սերվիչեն-Արբուն). «Եթե միջին դարու մեջ ապրեր ժան Հյուս մը կ'դառնար, եթե Ֆրանսայի հեղափոխության ժամանակ Սիեյես մը» (244) (Յանսինուր-Ռուսինյան). «Բարքով՝ Կալոն մը, ազատության տենչով՝ Պրուպոս մը» (238) (Շամիլ-Օբենց):

«Հայկական նամականիի» «պարահանդեսային» գլուխներում գերակայողը երկխոսություններն են: Դրանք հանդիպում էին նաև նախորդներում, բայց միայն այստեղ են դառնում կառուցվածքային

հիմնական արտահայտչամիջոց: Հարց ու պատասխանով, մեկնություններով ու բանավեճերով բնութագրվում են ոչ միայն կերպարները, այլև դրսևորվում են հեղինակի տեսակետները քաղաքական, փիլիսոփայական, մշակութային ու ազգային զանազան խնդիրների շուրջ:

Մամուլյանի գրելաոճն առհասարակ հարկանշվում է անմիջականությամբ, խոհականությամբ, դիցաբանական հիշատակումներով, գրական հերոսների, երևելի անձանց ու դեպքերի վկայակոչումներով: Այդուհանդերձ, նախընթաց նամակներում ինչ-որ տեղ զգացնել էր տալիս ավանդական-լրագրային ոճը, որը բացարձակում է թղթակցությունների ու քրոնիկների տեղեկարվական բնույթով: Իսկ դիմանկարային բաժնում տպավորիչը հուզական ընկալումներն են: Դա ի հայտ է գալիս պարահանդեսը նկարագրող առաջին իսկ հատվածում, որ կարարում է յուրօրինակ նախադրության դեր և պահպանվում հետագա ամբողջ շարադրանքի ընթացքում. «Այստեղ (պարահանդեսում .- Ա.Մ.) բանահյուսն իր քնարը կ'ստորտակե և ծնծղայն լավագույն կ'սեպե, ճարտասանն իր լեզուն կ'կտրե և պարեկի (թե) մը հետ թոթովել կ'սիրե, իմաստունը մոմոսի կարգը կ'անցնի, բժիշկն իր նշտրակը կ'թողու ու Կուպիտոնի աղեղն ու կապարճը կ'կախե, կրոնականն իր կնգուղը կ'հանե և Լուլաս մը կ'դառնա, քաղաքագետն իր բանտորի տուփը կ'գուցե պահ մը և Դիոգինեսի տակառը կ'մտնե...» (196):

Չնայած բոլոր այս բավականաչափ բազմազան հնարքներին, «ներքին մարդուն» որոնելու հեղինակի ջանքերին՝ կերպարները չեն դառնում լիարյուն: Նրանք բևեռացված են, մնում են սոսկ «երևելի ազգայինք», այս ու այն մտայնության կրող, քաղաքական որևէ հոսանքի կուսակից կամ հետևորդ: Մեր տպավորությամբ, այնուամենայնիվ, նրանց մեջ կա մեկը, որն ամենից ավելի է մոտենում գեղարվեստական կերպարին:

Խոսքը Մուսայիկի մասին է (ԾԴ): Մենք չգիտենք, թե ով է նրա նախադիպը, որ Պեշիկթաշյանի ժամանակակից «քերթողներից» է, բայց այս պարագայում դա էական չէ, քանի որ անձնավորում է ոչ թե մի մարդու, այլ արևմտահայ «ստեղծագործ» մտավորականության անգաղափար ու անիդեալ շրջանակը: Վանող արտաքինով («թզուկ մ'որ առ 'ի շեղ կ'քալեր, գլուխը սեխի ձև ուներ, և գագաթը՝ կղմինդրի գույն պզտիկ գդակ...» 210-211), հնուրի հագուստներով, կեղտոտ օձիքով, պարառտորած գուլպաներով այս անոթի բանաստեղծը հպարտ է, քանի որ համոզված է,

թե այդպես է «մեծ բանաստեղծներու բաժինն» / «Գիտե՞ թե Հովսեփ կ'մուրար... Դասու փմանկ մ' էր» (210): Մուսայիկն իր կոչումը փեսնում էր բանաստեղծության մեջ, պարտաստ էր գրել ամեն ինչի մասին. «Երբ հանդես մը, հարսնիք մը, փոռ մը կատարվի, երբ մարդու մը զավակը մեռնի կամ ծնի, երբ փապանագիր մը գրելու պետք լինի, Մուսայիկ ինքնահորդոր կ'նստի գրասեղանին առջև և օրն 'ի բուն աշխատելով՝ ասոյիս անդին իմաստ և ոճ փոխ առնելով՝ նվագ մը, փաղ մը, շեր մը, գեղուն մը, եղերգ մը կ'հորինէ...» (211):

Մամուրյանի եզրակացությունը հստակ է. Մուսայիկը «թերևս լավ գրագիր, գործունյա արհեստավոր, 'ի վերջե ընկերության օգտակար մեկ անդամը կ'լիներ եթե իրեն բուն կոչման հետներ...» (212): Իսկական քերթողը պետք է փառանա ոչ թե «Պեգասի թրիքով», այլ «Պրոմեթեի կրակով». այս չափազանց դիպուկ դիտողությունը գեղագիտական խորը իմաստ ունի: Ի հակակշիռ Մուսայիկի՝ Մամուրյանը մատնանշում էր անում «Ապոլոնի հարազար զավակին» Թաշման-Պեշկեթաշլանին, որի երգերը «ամենուն բերանն ու սիրտն են» (լիովին հասկանալի է, թե ինչու է նա ասպարեզ մտնում «պարառաբույծ» Մուսայիկին նվիրված նամակից անմիջապես հետո):

Մեր դիտարկումները ցույց են փալիս, որ Մարթես Մամուրյանը իսկապես հաճախակի է խախտում հրապարակախոսության եզրագիծը, ներխուժում գեղարվեստականության ոլորտը: Ու թեև գործադրված միջոցները հեղաքրքիր են ու գնահատելի, սակայն «Հայկական նամականիի» համար բնութագրիչը ի վերջո հրապարակագրական պաթոսն է: Նրա դիմանկարները ևս ներկայացված են հրապարակախոսական կտրվածքով, սակայն ժանրի անշրջանցելի ու ինքնօրինակ նախանմուշներն են:

Մարթես Մամուրյանը ընդարձակեց իր նախորդների բացած արահետը, իսկ այն պողոփայի վերածելը և գեղարվեստական իսկական կոթողներով զարդարելը վիճակվեց հեղինակներին և ամենից առաջ Հակոբ Պարոնյանին ու Գրիգոր Զոհրապին:

Աղբյուրներ և ծանոթագրություններ

1. Վրույր (Մադթեսու Մամուրյան), Հայկական նամականի, Ջյուլիան, 1872, էջ 3: Այս հրապարակությունից կատարվող հետագա մեջբերումները կնշվեն շարադրանքում փակագծերի մեջ:
2. Արփիար Արփիարյան, Երկեր, Երևան, 1971, էջ 424:
3. Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ.Պոլիս, 1921, էջ 132:
4. Պրոֆ. Հրաչյա Աճառյան, Մադթեսու Մամուրյան, «Էջմիածին» ամսագիր, 1959, Ը-Թ, էջ 39:
5. Տես Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք առաջին, Երևան, 1955, էջ 539, 373:
6. Տես նաև «Արևելյան մամուլ» հանդես, Ջյուլիան, 1871, թջվ 2, էջ 54:
7. Տես Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 539-543, ինչպես նաև Հայկ Ղազարյան, Մադթեսու Մամուրյան, մենագրություն, Երևան, 1961, էջ 40-58:
8. Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 41, 42:
9. Տես Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 539-540:
10. Տես Հրանտ Ասատուր, նշվ. աշխ., էջ 124:
11. Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 540:
12. Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 56:
13. Թեև, մի բացառությամբ (Ապշեն), ծանոթագրողներն ապավինում են գաղափարական կռվաններին և ի վերջո պարփակվում վարկածների ոլորտում («ենթադրվում է», «հիմք է դալիս ենթադրելու», «հանկված ենք ենթադրելու»), այնուամենայնիվ նրանց կռահումներն ընդունելի են: Ավելի ջանադիր լինելու դեպքում կարելի էր գտնել բանասիրական ապացույցներ նս. մասնավորապես Սահե կեղծանվան հարցում մեծապես օգտակար կարող էր լինել «Հայելի գործոց Տիգրանյան Սկրտիչ վարդապետի և առաջնորդի Ջյուրիսթանու» գիրքը (Կ.Պոլիս, 1864):
14. Հ. Սիմեոն Երեմյան, Ազգային դեմքեր. Գրագետ հայեր, հինգերորդ շարք, Վենետիկ, 1914, էջ 369-370:
15. Երվանդ Օդյան, Հովսեփ Շիշմանյան (Ծերենց), «Մասիս» հանդես, Կ.Պոլիս, 1893, հունիս 26, թիվ 3997, էջ 389-390:
16. Տես Ռուզան Նանուրյան, Ծերենց, կյանքը և գործը, Եր., 1986, էջ 47:
17. Չի բացառվում, որ Մամուրյանը Շամհի կեղծանունը վերցրած լինի Սիք. Նալբանդյանի «Հիշատակարանից...»:
18. Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու Գրաքննարկ, հ. Երկրորդ, Երևան, 1964, էջ 32, ինչպես նաև էջ 388 (կենսագրական տեղեկանքը):
19. Արշակ Ա. Ալադյան, Ազգային Սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը (հիսնամյա տարեդարձին առթիվ), «Ընդարձակ օրացույց» Ա. Փրկչյան Ազգային հիվանդանոցի հայոց, Կ.Պոլիս, 1910, էջ 404:
20. Տես Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 386:
21. Տես Արշակ Ա. Ալադյան, նշվ. աշխ., էջ 466, 468: